Հավելված N 1
ՀՀ կառավարության 2018 թ.
մարտի 6-ի նիստի N 9
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Մանկապատանեկան սպորտի ոլորտում պետական քաղաքականության իրականացումը ենթադրում է մի շարք հիմնական խնդիրների լուծում, որոնք են՝ մանուկների ու պատանիների բազմակողմանի զարգացման, առողջ կենսակերպի, ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու քարոզչությանն ուղղված համալիր միջոցառումների ու ծրագրերի իրականացում, համայնքային, մարզային և հանրապետական միջոցառումների անցկացում, մանկապատանեկան սպորտի ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակման գործընթացի կազմակերպում, ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության անընդհատության, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակությանը նպաստող միջոցառումների անցկացում, մարզական հերթափոխի պատրաստման աշխատանքների համակարգում, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվող մանուկների ու պատանիների համար հավասար պայմանների ստեղծում, մանկապատանեկան սպորտի զարգացման ծրագրերի ընդունում:

2. Վերջին տարիներին սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումն իր դրական ազդեցությունն է թողել մանկապատանեկան սպորտի զարգացման ընթացքի վրա, սակայն մանկապատանեկան սպորտը մշտապես կարիք ունի դրական վերափոխումների:

3. Ֆիզիկական կուլտուրան և սպորտը, այդ թվում նաև մանկապատանեկան սպորտը, յուրատեսակ միջոց են առողջության պահպանման և ամրապնդման համար, որոնք խթանում են անհատի բարոյա-կամային որակների զարգացումը: Միայն համակցված միջոցառումների համակարգի առկայությունը պայմաններ կստեղծի մանուկների և պատանիների գիտակցության մեջ ֆիզիկական կուլտուրայի դերի կարևորության արմատավորման և բնակչության առողջության մակարդակի բարձրացման համար:

4. Ծրագրի կատարողներն են՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, Հայաստանի Հանրապետության մարզպետարանները, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները:

II. ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՊՈՐՏԻ ՆԵՐԿԱՅԻՍ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Հայաստանի Հանրապետությունում մարզական հերթափոխի պատրաստումը 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ իրականացնում են տարբեր գերատեսչական պատկանելության 175 մանկապատանեկան մարզադպրոցները և Երևանի ու Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջները: Նշված մարզադպրոցների մարզական խմբերում 1962 մարզիչ-մանկավարժների ղեկավարությամբ 42 մարզաձևերով մարզվում են շուրջ 40300 պարապողներ: Մարզադպրոցները տեղաբաշխված են հանրապետության 10 մարզերում և Երևանում: Առկա է մարզադպրոցների կենտրոնացվածություն Երևանում (59 մարզադպրոց, 17979 պարապող) և մյուս մեծ քաղաքներում՝ Գյումրիում (24 մարզադպրոց, 5249 պարապող) ու Վանաձորում (12 մարզադպրոց, 3095 պարապող): Մարզական 2 քոլեջներում ընդգրկված են տարեկան միջին հաշվարկով 877 սովորող:

6. Մարզադպրոցների և քոլեջների հիմնական խնդիրներն են մատաղ սերնդի առողջության պահպանումն ու ամրապնդումը, ընտրած մարզաձևում մարզական հերթափոխի պատրաստումը, պարապողների մարզական ունակությունների կատարելագործումը, Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի համալրումը, միջազգային մրցասպարեզներում վերջիններիս արդյունավետ մրցունակության ապահովումը:

7. Ակներև է, որ սպորտը, այդ թվում նաև մանկապատանեկան սպորտը, կոչված է լուծելու սոցիալ-տնտեսական շատ հիմնախնդիրներ. այն համախմբում է հասարակությանը, երիտասարդությանը զերծ է պահում վատ սովորություններից ու զբաղմունքներից, երկարացնում է կյանքի տևողությունը և բարձրացնում որակական մակարդակը: Տարբեր վիճակագրական տվյալների հիման վրա կատարվել են եզրակացություններ առ այն, որ սպորտով զբաղվողները սպորտով չզբաղվողների համեմատությամբ երկու անգամ ավելի քիչ են հիվանդանում ոչ վարակիչ հիվանդություններով: Ֆիզիկական պատրաստվածությունը ոչ միայն սպորտի և ֆիզիկական դաստիարակության, այլև առողջության և առողջապահության կարևորագույն բաղկացուցիչ մասն է և անհրաժեշտ է ընդհանուր բարեկեցության համար: Մանկապատանեկան սպորտը ամուր հիմք է վերոնշյալ խնդիրների լուծման համար:

8. Պետական քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, այդ թվում նաև մանկապատանեկան սպորտի զարգացման հիմնահարցերը: Պետական քաղաքականության նպատակն է ճիշտ օգտագործել ֆիզիկական կուլտուրան և սպորտը բնակչության առողջության ամրապնդման, երիտասարդության դաստիարակության, ընտանիքում առողջ ապրելակերպի ամրապնդման համար:

9. Մասսայական սպորտի զարգացման խնդիրների շարքում անհրաժեշտ է կարևորել մանուկների և պատանիների ներգրավումը սպորտային պարապմունքների մեջ: Նրանց մեծամասնությունը տարբեր պատճառներով հնարավորություն չունի կանոնավոր կերպով զբաղվելու ֆիզիկական կուլտուրայով և սպորտով:

10. Հանրակրթական դպրոցների մարզադահլիճները վարձակալական հիմունքներով տրվող միջոցների որոշ մասը գերադասելի է ուղղել արտադասարանական աշխատանքների կազմակերպմանը:

11. Ըստ արժանվույն գնահատելով մարզական հերթափոխի պատրաստում իրականացնող մարզական հասարակական կազմակերպությունների ներդրումը սպորտի զարգացման ուղղությամբ (սկսած 90-ական թվականների սկզբներից)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ մարզական հասարակական կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության պետբյուջեից հատկացվում է պետական աջակցություն:

12. Մարզական հասարակական կազմակերպությունների կանոնադրական գործունեությունը պատշաճ մակարդակով իրականացնելուն խոչընդոտում են մի շարք չլուծված խնդիրներ, որոնք հիմնականում կապված են ֆինանսական միջոցների սղության հետ: Մարզական հասարակական կազմակերպությունները նշված պատճառով չունեն ներքին առաջնություններ անցկացնելու, դրանց արդյունքներով կազմակերպությունների հավաքական թիմերը համալրելու, հանրապետության առաջնություններին նրանց նախապատրաստելու և մասնակցելու հնարավորություն:

13. Վերջին տարիներին մանկապատանեկան սպորտի ոլորտում իրականացված բարեփոխումները հիմնականում ուղղված են օրենսդրական դաշտին, ֆինանսական և նյութատեխնիկական բազայի ամրապնդման խնդիրներին:

14. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից 2015-2016 թվականներին իրականացված Հայաստանի Հանրապետության դպրոցական և նախադպրոցական (ընդհանուր թվով 1178 դպրոցական և 503 նախադպրոցական) հաստատություններում ֆիզիկական դաստիարակության համար նախատեսված պայմանների, սարքավորումներով հագեցվածության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 503 նախադպրոցական հաստատության մարզադահլիճներից 35 %-ը չունի ֆիզիկական դաստիարակության համար նախատեսված դահլիճ, մարզադահլիճների կապիտալ վերանորոգման կարիք ունի 56 %-ը (10 %-ը՝ մասամբ): Ընդհանուր թվով 1178 դպրոցական կազմակերպությունների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մարզադահլիճների 53.5 %-ը (9.4 %-ը՝ մասամբ) ունի կապիտալ վերանորոգման կարիք, սարքավորումների գերակշիռ մասով ապահովված չէ 22.6 %-ը, ապահովված է մասամբ՝ 43 %-ը:

15. Վերլուծելով և համեմատելով տարբեր գերատեսչական ենթակայության մարզա-դպրոցների աշխատանքները՝ ակնհայտ է, որ համայնքային ենթակայության մարզադպրոցները զիջում են այլ գերատեսչությունների մարզադպրոցներին ինչպես մարզական արդյունքներով, այնպես էլ ընտրած մարզաձևում պատանիների զանգվածային ներգրավմամբ: Այսպիսով՝ ըստ մարզադպրոցների ներկայացրած հաշվետվությունների՝ 2016 թվականին Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության մեկ մարզադպրոցում միջին հաշվարկով ներգրավված են եղել 300 պարապող, իսկ համայնքային ենթակայության մեկ մարզադպրոցում՝ 175 պարապող, որոնց թիվը 125-ով կամ շուրջ 41.7 %-ով քիչ է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության մարզադպրոցի պարապողների միջին թվից: 2016 թվականին աշխարհի և Եվրոպայի առաջնություններում հանրապետության հավաքական թիմերի մարզիկների նվաճած 105 մեդալներից 57-ը կամ մեդալների 54 տոկոսը Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության 26 մանկապատանեկան մարզադպրոցների,

«Հայաստան», «Սևան», «Դինամո» մարզական հասարակական կազմակերպությունների և մարզական 2 քոլեջների մարզիկների ձեռքբերումներն են:

16. Լուրջ մտահոգության տեղիք է տալիս մանկապատանեկան մարզադպրոցների կադրային ապահովության հարցը: Տարեցտարի մարզիչ-մանկավարժների մասնագիտությունը կորցնում է իր վարկանիշը ցածր վարձատրության պատճառով. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի, Շիրակի ու Վանաձորի պետական համալսարանների «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտական բաժինների շրջանավարտները, ավարտելով բուհը, նախընտրում են անցնել բարձր վճարվող այլ աշխատանքի: Այդ ամենը չի նպաստում մարզչական կադրերի սերնդափոխությանը և որպես հետևանք՝ համակարգը ծերացման կայուն միտում ունի: Ի դեպ, տարբեր գերատեսչական պատկանելության մարզադպրոցներում տարբեր է վարձատրության չափը:

17. Մանկապատանեկան սպորտի ոլորտում մրցումների անցկացման հետ կապված հիմնախնդիրները դեռևս մտահոգիչ են մնում: Մանկապատանեկան մարզական միջոցառումների օրացուցային պլանը, հանրապետական և քաղաքային մրցումների անցկացման մակարդակը չեն նպաստում մարզիկների մարզական կատարելագործմանը: Որոշ մարզերում չեն անցկացվում ներքին մարզային առաջնություններ ոչ միայն ֆինանսական միջոցների սղության պատճառով, այլև կազմակերպչական աշխատանքների բացակայության հետևանքով:

18. Սպորտի հիմնախնդիրներից է նաև 18 տարեկանից բարձր տարիքի հեռանկարային մարզիկների պարապմունքների կազմակերպումը մանկապատանեկան մարզադպրոցներում:

19. Յուրաքանչյուր տարի իրականացվում է ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստում, որի նպատակն է մանկապատանեկան մարզադպրոցների մարզիչ-մանկավարժներին ծանոթացնել ուսուցման ժամանակակից պահանջներին և մեթոդներին, սաների ֆիզիկական դաստիարակության արդի հիմնախնդիրներին, մարզչական և կազմակերպչական նորագույն նվաճումներին:

20. Ընդլայնված ու բարելավված պայմանները հնարավորություն են տալիս ավելի արդյունավետ դարձնելու մարզման գործընթացը, ինչպես նաև ավելի շատ պարապողների ընդգրկելու մարզադպրոցներում: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նյութատեխնիկական բազայի ամրապնդման համար անհրաժեշտ է այն հագեցնել ժամանակակից մարզագույքով և մարզասարքերով, ինչն էլ կնպաստի բարձրակարգ մարզիկների և պարապողների քանակի ավելացմանը, ուսումնամարզական գործընթացի որակի բարձրացմանը:

III. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Ծրագրի գերակայություններն են՝

1) մանկապատանեկան սպորտի զարգացումը,

2) մարզական հերթափոխի պատրաստումը:

IV. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

22. Ծրագրի նպատակը սոցիալ-տնտեսական նոր պայմաններում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն հանրապետությունում

մանկապատանեկան սպորտի զարգացման և նրա արդյունավետ գործունեության համար պայմանների ստեղծումն է:

23. Ծրագրի խնդիրներն են՝

1) մանուկների և պատանիների ֆիզիկական դաստիարակության համակարգի արդյունավետ գործունեության բարձրացման և զարգացման համար պայմանների ստեղծումը,

2) մանուկների և պատանիների ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստականության մակարդակի բարձրացումը,

3) ոլորտի գործունեության կառավարման համակարգի կատարելագործումը:

V. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

24. Ակնկալվող արդյունքներն են՝

1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նկատմամբ մանուկների և պատանիների հետաքրքրության ձևավորումը,

2) մանուկների և պատանիների առողջության ամրապնդումը, անհատի հոգևոր և ֆիզիկական ներդաշնակ զարգացումը,

3) հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատ-րաստականության ապահովումը,

4) մարզական հերթափոխի, բարձրակարգ մարզիկների պատրաստումը, Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի համալրումը:

25. Ծրագիրը նախատեսում է մանկապատանեկան սպորտի զարգացման հիմնական ուղիները:

VI. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

26. Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներ կարող են լինել պետական և համայնքների բյուջեները, մասնավոր հատվածի ներդրումները և նպատակային նվիրատվությունները, օրենքով չարգելված այլ աղբյուրները: Ծրագրի միջոցառումների իրականացման համար պետական աջակցության մասով ֆինանսավորումը կարող է նախատեսվել համապատասխան բյուջետային տարիների համար կրթության և սպորտի ոլորտների գծով պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերով և պետական բյուջեներով սահմանվող ծախսերի սահմանաչափերի շրջանակներում՝ ելնելով այդ ոլորտների ծախսային առաջնահերթություններից:

VII. ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	Մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների վերա–պատրաստման դասընթացների, գործնական պարապմունքների շարունակական կազմակերպում
Համառոտ նկարագրությունը	Հայաստանի Հանրապետությունում գործող մարզադպրոցների տարեկան շուրջ 180 մարզիչ-մանկավարժների վերապատրաստում

Նպատակը/ կարևորությունը	Հայաստանի Հանրապետությունում գործող մարզադպրոցների տարեկան շուրջ 180 վերապատրաստված և բարձր որակավորմամբ մարզիչ-մանկավարժներ, մարզադպրոցների ուսումնամարզական գործընթացի բարելավում
Տեղեկատվության հավաքումը/ աղբյուրը	ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության աշխատակազմի համապատասխան վարչություն
Հաշվարկման մեթոդը	Վերապատրաստման յուրաքանչյուր ցիկլի ցուցանիշների հաշվառում
Տեղեկատվության սահմանափակումները	Ոլորտի վերապատրաստում չանցած մարզիչ-մանկավարժների ստույգ թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, որը հստակեցվում է:
Ցուցանիշի տեսակը	Տարեկան շուրջ 180 մարզիչ-մանկավարժների վերապատրաստում
Չափման միավորը	Վերապատրաստման վկայագիր ստացած մարզիչ-մանկավարժ
Ներկայացման եղանակը	Ոչ կուտակային
Հաշվետվողականության ցիկլը	Ամենամյա
Թույլատրելի շեղումը	5 %
Պատասխանատվությունը	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

Ցուցանիշի անվանումը	Մանկապատանեկան սպորտի ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերով և ծրագրային փաստաթղթերով ապահովում
Համառոտ նկարագրությունը	Մանկապատանեկան մարզադպրոցների համար միասնական ուսումնական ծրագրերի առկայություն՝ ըստ մարզաձևերի և մարզման փուլերի
Նպատակը/ կարևորությունը	Տարեկան առնվազն 3-4 մարզաձևի ուսումնական ծրագրի մշակում
Տեղեկատվության հավաքումը/ աղբյուրը	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ
Հաշվարկման մեթոդը	Տարեկան 3-4 մարզաձևի համար ուսումնական ծրագիր
Տեղեկատվության սահմանափակումները	Տեղեկատվության սահմանափակումներ չկան:
Ցուցանիշի տեսակը	Նպատակային արդյունավետություն
Չափման միավորը	Տարեկան 3-4 ծրագիր
Ներկայացման եղանակը	Ոչ կուտակային
Հաշվետվողականության ցիկլը	Տարեկան
Թույլատրելի շեղումը	25 %
Պատասխանատվությունը	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Ցուցանիշի անվանումը	ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցները, արտադպրոցական դաստիարակություն իրականացնող մարզական հասարակական կազմակերպությունները մարզական ժամանակակից գույքով ապահովում
Համառոտ նկարագրությունը	Մարզումների համար անհրաժեշտ ժամանակակից մարզական գույքով ապահովված մարզակառույցներ
Նպատակը/ կարևորությունը	Հայաստանի Հանրապետությունում գործող մարզադպրոցների նյութատեխնիկական բազայի ապահովում
Տեղեկատվության հավաքումը/ աղբյուրը	ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության աշխատակազմի համապատասխան վարչություն
Հաշվարկման մեթոդը	Մարզագույքով ապահովված մարզական կազմակերպությունների թիվը, բաշխված մարզագույքի անվանացանկ
Տեղեկատվության սահմանափակումները	Միջազգային և արտասահմանյան կազմակերպու–թյունների կողմից իրականացված ծրագրերով ստացված մարզագույքի վերաբերյալ տեղեկատվություն
Ցուցանիշի տեսակը	Տարեկան շուրջ 40 մարզական կազմակերպություններ մարզագույքով ապահովում
Չափման միավորը	Մարզագույքով ապահովված մարզական կազմակերպություններ
Ներկայացման եղանակը	Ոչ կուտակային
Հաշվետվողականության ցիկլը	Ամենամյա
Թույլատրելի շեղումը	10 %
Պատասխանատվությունը	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն